# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ

Հայաստանի ինտերնետային լրատվամիջոցների
հետազոտության արդյունքներ

*2014 թ.հոկտեմբերի 1- նոյեմբերի 30*

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԵԴԻԱՅՈՒՄ

RUSSIA
IN ARMENIAN
MEDIA

Երևան 2015

Սույն հետազոտությունն իրականացվել է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի կողմից ֆինանսավորված «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգերի շուրջ» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

*Հետազոտության գաղափարը, մեթոդաբանությունն ու արդյունքների վերլուծությունը՝*
***«Ռեգիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանի***

*Մեդիա դիտարկման խումբը՝*
***Անժելա Չոբանյան, ՍոսիԽանիկյան, Մարինե Սարգսյան, Վահե Սարուխանյան***

*Արդյունքների տեխնիկական մշակումը, աղյուսակներն ու գրաֆիկները՝*
***Շողիկ Ստեփանյանի***

# Բովանդակություն


ԻՆՉՈ՞Ւ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ..... 4

Ի՞ՆՉ ԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԵԼ ..... 6

Ո՞Ր ԶԼՄ-ՆԵՐՆ ԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԵԼ ..... 6

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ..... 7

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՁԵՒԱՎՈՐՈՂ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ..... 9

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ. ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ԵՒ ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐ ..... 12

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԻՆՖՈԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ..... 16

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ..... 20

ԹԵՄԱՏԻԿ ՌԵՅՏԻՆԳՆԵՐ ԵՒ ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ԳԾԵՐ ..... 22

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՒ ԱՎՏՈՍՏԵՐԵՈՏԻՊԵՐ ..... 26

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 29

ՀԱՎԵԼՎԱԾ ..... 35

# ԻՆՉՈ՞Ւ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

## ՊԱՏՃԱՌ 1.

2004-2005 թթ. մեր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնն անցկացրեց մի հետազոտություն, որը նպատակ ուներ ի թիվս այլ իրողությունների նկարագրելու հայաստանյան հասարակությունում եւ հայկական մեդիայում թշնամի եւ գործընկեր/բարեկամ պետությունների մասին արմատավորված ստերեոտիպերը:

Այն ժամանակ Հայաստանի բնակչության հարցումներով եւ հայաստանյան մեդիայում դրական նկարագրությունների քանակով Ռուսաստաննակնհայտորեն առաջ էր անցել արտասահմանյան այլ՝ որպես բարեկամ պետություն մատնանշված ու նկարագրված երկրներից (Армения и Азербайджан на перепутье «ни мира, ни войны», Ереван, 2005 թ., стр.33-34, 81-84):

Անցել են տաս տարիներ, եւ հիմա այս հարցում կան իրարամերժ պնդումներ:

2014 թ. ընթացքում եւ դրանից առաջ էլ ռուսաստանյան մի շարք գործիչներ ու փորձագետներ քանիցս հայտարարել են, թե հայաստանյան լրատվամիջոցներում գնալով բարձրանում է Ռուսաստանի նկատմամբ այսպես կոչված **ազբեսիվության ինդեքսը** (այսինքն՝ բացասական եւ չեզոք նկարագրությունների ցուցանիշների հարաբերության գործակիցը): Նաեւ՝ թե դա, հիմնականում արեւմտյան կողմնորոշման օգտին հանդես եկող լրատվամիջոցների եւ ուժերի ակտիվ գործունեության արդյունք է:

Իսկ հայաստանյան մասնագետների շրջանակներում կա համոզմունք, որ չնայած Ռուսաստանի հասցեին հայկական մեդիայում քննադատական կարծիքների ավելացմանը, միեւնույն է Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի տրենդներ չկան ոչ մեդիա դիսկուրսում, ոչ առավելեւս զանգվածային քաղաքական գիտակցության մեջ, այսպես կոչված սովորական մարդկանց շրջանում:

Ուստի՝ կար անհրաժեշտություն կոնկրետություն հաղորդելու այս տարակարծություններին:

## ՊԱՏՃԱՌ 2.

Հայաստանի համար Եվրասիական ինտեգրման, իսկ հետխորհրդային ուրիշ երկրների համար Եվրոպական ինտեգրման գործընթացները վերջին երկու տարիների ընթացքում ստեղծեցին **նոր քաղաքական եւ ներհասարակական օրակարգեր,** որոնք շոշափելի տեղ են սկսել զբաղեցնելհայաստանյան հասարակական դիսկուրսում:

Նախքան մեր ուսումնասիրությունը հայաստանյան մամուլում այս մասին հրապարակվող նյութերից զգացվում էր, որ Հայաստանի ինտեգրացիոն ապագա սյուժեները ոչ թե պարզապես կապվում են երկրի համար կարեւորագույն խնդիրների հետ (անվտանգություն եւ Ղարաբաղյան հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ, տնտեսական զարգացման եւ ներքաղաքական ազատությունների անշրջադարձելիության հնարավորություններ եւ այլն), այլ բխեցվում են Եվրասիական տնտեսական միության ձեւավորման համատեքստում Ռուսաստանի հայկական ներկայիս քաղաքականությունից:

## ՊԱՏՃԱՌ 3.

Եվ վերջապես, 2014 տարեսկզբից Ռուսաստանի եւ այսպես կոչված հավաքական Արեւմուտքի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ սրացումների համատեքստի հիմնական բաղկացուցիչը կողմերի միջեւ ընթացող տեղեկատվական պատերազմն է, սրան բնորոշ բոլոր հատկանիշներով: Ռուսաստանի թեման միջազգային լրահոսի ստաբիլ բաղկացուցիչն է, Ռուսաստանի մասին խոսում ու գրում են գրեթե ամենուրեք:

**Ուստի՝ բացի ամեն ինչից կար հետազոտական հետաքրքրություն նույնպես, թե որքա՞ն «վարակիչ է» այդ տեղեկատվական պատերազմը հայաստանյան մեդիայի համար էլ:**

Բոլոր այս պատճառներն այսօր, Գյումրիում 2015 թ. հունվարի 12-ի սպանություններից եւ հայ-ռուսական դեռ ցնցվող մթնոլորտի պայմաններում էլ են արդիական:

Հնարավոր չէ կանխագուշակել, թե ինչ՞ կհասցնեն կողմերին եւ մինչեւ ո՞ւր կհասնեն այդ դիսկուրսային ցնցումները նույնիսկ մոտ ապագայում:

Բայց ակնհայտ է, որ մեր հետազոտության արդյունքներն արտացոլում են այդ ցնցումներին անմիջապես նախորդող մի իրավիճակի ընդհանուր պատկերը:

# Ի՞ՆՉ ԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԵԼ

Ահա բոլոր այս պատճառները մեզ դրդեցին ձեռնամուխ լինելու Ռուսաստանի կերպարի ուսումնասիրությանը նաեւ հայաստանյան լրատվամիջոցներում մի շարք կոնկրետ հարցադրումներով.

- Տեղեկատվական ի՞նչ ակտիվություն կա Ռուսաստանի նկատմամբ հայաստանյան մեդիայում:
- Տեղեկատվական ի՞նչ աղբյուրներից են օգտվում հայաստանյան լրատվամիջոցները Ռուսաստանի հետ այս կամ այն կերպ առնչվող նյութեր արտադրելիս:
- Ի՞նչ տեսակի կերպարով  են հայաստանյան լրատվամիջոցները ներկայացնում Ռուսաստանն իրենց լսարաններին,  ազդեսիվության եւ բարյացակամության ի՞նչ ինդեքսներ են գործում այդ ընթացքում:
- Թեմատիկ ի՞նչ սյուժեներով է ներկայացվում Ռուսաստանի հայկական արդի քաղաքականությունը, բովանդակային ի՞նչ մեսիջներով, ի՞նչ առաջնահերթություններով:
- Ինչպե՞ս է Հայաստանն ու հայաստանյան հասարակությունը (ինքնա)ներկայացվում լսարաններին Ռուսաստանյան թեմայի համատեքստում, ի՞նչ ավտոստերեոտիպներ են շրջանառվում:

Ընդհանուր առմամբ ուսումանսիրությունն ընթացել է **<u>«Ովքե՞ր, ի՞նչ եւ ինչպե՞ս են</u> խոսում Ռուսաստանի մասին հայաստանյան տեղեկատվական հարթակներում»** սկզբունքով:

# Ո՞Ր ԶԼՄ-ՆԵՐՆ ԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԵԼ

Դիտարկվել են հայաստանյան 8 ինտերնետային (1in.am, News.am, Lragir.am, Aravot.am, Ilur.am, Yerkir.am, 7or.am, Panorama.am) լրատվամիջոցների հայերեն բովանդակությունները:

Ինչպես հասկանալի է այս ընտրությունից՝մերխմբումառկաեն՝

- տարբեր քաղաքական (իշխանական եւ ընդդիմադիր) ուժերին հարող, նաեւ անկախ ԶԼՄ-ներ:

- ինտերնետային ռեսուրսներ, որոնք ունեն 2-16տարիների պատմություն, բայց յուրաքանչյուրը՝ կայուն լսարաններ ու այլ առանձնահատկություններ:

Մի խոսքով՝ դիտարկվել է հայաստանյան ինտերնետային հարթակներում գործող, նաեւ առցանց լրատվություն ապահովող տիպային ԶԼՄ-ների մի խումբ:

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկված լրատվամիջոցներն ունեն նյութերի արտադրման տարբեր ինտենսիվություն, ժանրային նախասիրություններ եւ այլ առանձնահատկություններ: Դրանց շարքում կան այնպիսի ԶԼՄ-ներ, որոնք միեւնույն իրադարձության այս կամ այն հատվածը ներկայացնում են որպես առանձին միավոր նյութերառանձին վերնագրերով: Եվ՝ լրատվամիջոցներ, որոնք այդ նույն իրադարձության առիթով հանդես են գալիս միանգամից սեփական վերլուծական հոդվածներով, մեկնաբանություններով:

ԶԼՄ-ների այս խմբում օրական նվազագույնը շուրջ 100, առավելագույնը՝ շուրջ 280 նյութ հրապարակող լրատվամիջոցներ կան (1in.am, News.am), նաեւ՝ այնպիսիները, որոնց օրական առավելագույն քանակի նյութերը 60-70-ի սահմաններում են (Ilur.am, Yerkir.am, 7or.am):

Ռուսաստանի մասին նյութերի առավելագույն քանակը մեկ օրվա ընթացքում կազմել է 11-ից (7or.am, Ilur.am, Panorama.am) 30-32 (News.am, Lragir.am) նյութ:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկները**
**Գրաֆիկներ.Նյութերի առավելագույն եւ նվազագույն քանակ մեկ օրվա ընթացքում**






Ռուսաստանը միակ երկիրն է, որին ուսումնասիրության ժամանակահատվածի միասնական ցուցանիշներով ամբողջովին կամ մասնակիորեն առնչվող նյութերի քանակը գերազանցել է ցանկացած այլ արտասահմանյան երկրի, այդ թվում՝ Ադրբեջանի, մասին նյութերի ընդհանուր ցուցանիշներին:

Ռուսաստանն իր ներքին եւ արտաքին հարցերով, այդ թվում՝ քաղաքականության հայկական ուղղության տարբեր դրսեւորումներով առկա է եղել 8 ԶԼՄ-ների թողարկած բոլոր նյութերի 7 %-ում:

**Տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակ 1**

Ստորեւ բերված գրաֆիկից երեւում է, թե 2014 թ.հոկտեմբեր-նոյեմբերի 61 օրերից քանիսի ընթացքում առհասարակ չի եղել ռուսաստանյան թեմատիկային որեւէ անդրադարձ:

**Գրաֆիկ. Օրերի քանակ, երբ չեն եղել Ռուսաստանի թեմատիկայով նյութեր**



Այս խմբում կան ռուսաստանյան սյուժեններով առանձնակի  հետաքրքրված, եւ դրանց շոշափելիորեն ավելի պակաս անգամ անդրադարձած լրատվամիջոցներ:

Առավելագույն արդյունքներ ունի այս առումով Lragir.am-ը, որի բոլոր նյութերի ¼ -ում տեղ ունի Ռուսաստանը  (26%): Եվ ամենից քիչ անգամ Ռուսաստանն իր տարբեր կողմերով նկարագրվել է 1in.am կայքում (3%): Ilur.am եւ Yerkir.am կայքերում Ռուսաստանի հետ կապ ունեցող նյութերի քանակը նույնն է՝ 12%: Մյուս լրատվամիջոցներում (News.am, Aravot.am, Panorama.am, 7or.am)
այս ցուցանիշը տատանվում է 5-8% սահմաններում:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը.**




# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՁԵՒԱՎՈՐՈՂ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ռուսաստանի մասին նյութերը դիտարկված լրատվամիջոցներում ունեն հետեւյալ ծագումնաբանությունը. սեփական նյութեր, հայաստանյան այլ ԶԼՄ-ների նյութեր՝ դրանցից արված արտատպությունների, նյութերի համառոտ վերաշարադրանքների տեսքով, Ռուսաստանի մասին մամուլի համար տարածված հաղորդագրություններ եւ հայտարարություններ, սոցիալական ցանցեր:

Դատելով աղբյուրների այս հարաբերակցությունից, կարող ենք միանշանակ ասել, որ դիտարկված լրատվամիջոցներում միասնական ցուցանիշներով Ռուսաստանի մասին սեփական նյութերը (40%) եւ արտասահմանյան (այդ թվում՝ ռուսաստանյան) ԶԼՄ-ներից արտատպած նյութերը (43%) մոտավորապես նույնքան են: Պատկերը չի փոխվում նաեւ հայաստանյան այլ ԶԼՄ-ներից վերցված նյութերի քանակն ավելացնելու դեպքում: Հաղորդագրությունների եւ սոցցանցերից վերցված նյութերի քանակը ակնհայտորեն ավելի քիչ է:

Այլ խոսքերով՝ Ռուսաստանի կերպարի ձեւավորման գործում հայաստանյան ինֆորմացիոն աղբյուրները մոտավորապես կիսել են իրենց ջանքերը արտասահմանյան լրատվամիջոցների հետ:




Պատկերն էապես այլ է դառնում առանձին լրատվամիջոցների ցուցանիշները վերլուծելիս:

Այսպես, Ռուսաստանի թեմայով սեփական արտադրության նյութերի առաջատարներն են Lragir.am-ը (67% սեփական նյութի դիմաց 18% արտասահմանյան աղբյուրների նյութեր) եւ Aravot.am-ը (55% սեփական նյութի դիմաց 18% արտասահմանյան աղբյուրների նյութեր): Մնացած լրատվամիջոցներում արտասահմանյան, այդ թվում՝ ռուսաստանյան ԶԼՄ-ներից արտատպությունների քանակն ավելի մեծ է եղել, քան սեփական նյութերինը. News.am (26% սեփական եւ 65%՝ արտ.ԶԼՄ-ների նյութեր), 7or.am (26% սեփական եւ 47%՝ արտ.ԶԼՄ-ների նյութեր), Panorama.am (36% սեփական եւ 45%՝ արտ.ԶԼՄ-ների նյութեր) եւ այլն:

Տես ստորեւ բերված գրաֆիկները, նաեւ՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակներ 2 եւ3:









# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ. ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ԵՒ ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐ

Ռուսաստանի մասիննկարագրությունների նշանները (չեզոք, դրական եւ բացասական) որոշարկել ենք՝ըստ դրանց ուղիղ իմաստաբանական (semantic)նշանակության, այլ ոչ թե ըստ ենթատեքստային ուղերձների:

Դիտարկված 8 լրատվամիջոցների ընդհանուր ցուցանիշներով, Ռուսաստանի հետ կապված նյութերնամենից շատ անգամ ներկայացվել են չեզոք (նկարագրությունների 61%), ապա բացասական (29%) եւ դրական տրամադրվածությամբ (10%):

**Գրաֆիկ. Տրամադրվածության ընդհանուր պատկերը**




Հատուկ ընդգծենք, որ նշանների այս հերթականությունը հայաստանյան մեդիային ստաբիլ բնորոշ հատկանիշ է, որը դրսեւորվեց  նաեւ հայաստանյան մեդիայում Հայաստանի համար բարեկամ եւ թշնամի պետությունների մասին մեր նախկին ուսումնասիրությունների ժամանակ:

Օրինակ, տաս տարի առաջ Ռուսաստանի նկատմամբ այսպես կոչված ագրեսիվության ինդեքսը (բացասական եւ չեզոք նշանների քանակի հարաբերության գործակիցը) 0.32 էր, իսկ այսպես կոչված բարյացակամության ինդեքսը (դրական եւ չեզոք նշանների քանակի հարաբերության գործակիցը)՝ 0.24 (տես՝ Армения и Азербайджан на перепутье «ни мира, ни войны», Ереван, 2005 թ., стр. 82): Այսինքն՝ գրեթե համաչափ էին:

Տաս տարի առաջ 1 դրական նկարագրության դիմաց հայաստանյան լրատվամիջոցներում կարելի էր գտնել մոտ 5 չեզոք, իսկ 1 բացասական նկարագրության դիմաց 3 չեզոք նկարագրություն:

**Մեր այս հետազոտության տվյալներով, ինչպես դժվար չէ հաշվարկել, ագրեսիվության միասնական ինդեքսը կազմում է 0.48, բարյացակամության ինդեքսը՝0.15:**

**Այսինքն՝ 1 դրական նկարագրության դիմաց ունենք մոտ 6 չեզոք նկարագրություն, եւ 1 բացասական նկարագրության դիմաց՝ մոտ 2 չեզոք նկարագրություն:**

**Այսպես կոչված ագրեսիվության ինդեքսի նկատելի աճ որպես այդպիսին չկա, հատուկ հաշվարկներ էին պետք նաեւ բարյացակամության ինդեքսի այս չնչին նվազումը հայտնաբերելու համար:**

Առանձին լրատվամիջոցների ցուցանիշները համադրելիս տեսնում ենք, որ չեզոք, բացասական եւ դրական նկարագրությունների այս հերթականությունը պահպանվում է դիտարկված 8 լրատվամիջոցներից 7-ի դեպքում:

Ընդ որում, բացի Lragir.am-ից եւ Aravot.am-ից, չեզոք եւ այսպես կոչված էմոցիոնալ (դրական կամ բացասական) նկարագրությունների ցուցանիշների միջեւ տարբերությունը շոշափելի մեծ է:

Aravot.am-ում չեզոք նկարագրություններն ընդամենը 1%-ով են գերազանցում բացասականների ցուցանիշին (41% չեզոք, 40% բացասական նկարագրություն):

Lragir.am-ն առանձնանում է մնացած բոլոր լրատվամիջոցներից հակառակ պատկերով. այստեղ բացասական նկարագրությունների քանակը 8%-ով ավելի է չեզոքներից  (52% բացասական, չեզոք 44% նկարագրություն):

Այնուհանդերձ, բացառություն կազմածLragir.am-ի պարագայում էլ 1 չեզոք նկարագրության դիմաց ունենք է 1.2բացասական նկարագրություն, մեծ հաշվով՝բացասականի եւ չեզոքի 1/1 հարաբերակցություն:

**Տես ստորեւ բերված գրաֆիկները, նաեւ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակներ 4 եւ 5**


Տրամադրվածություն ըստ ԶԼՄ-ների /Չեզոք նկարագրություններ
Panorama.am 72%
Yerkir.am 78%
Ilur.am 75%
7or.am 83%
Aravot.am 41%
Lragir.am 44%
News.am 67%
1in.am 51%


Տրամադրվածություն ըստ ԶԼՄ-ների /Դրական նկարագրություններ
Panorama.am 14%
Yerkir.am 7%
Ilur.am 5%
7or.am 4%
Aravot.am 19%
Lragir.am 4%
News.am 11%
1in.am 13%


Տրամադրվածություն ըստ ԶԼՄ-ների /Բացասական նկարագրություններ
Panorama.am 14%
Yerkir.am 15%
Ilur.am 20%
7or.am 13%
Aravot.am 40%
Lragir.am 52%
News.am 22%
1in.am 36%

Գրաֆիկ. ԶԼՄ-ների ազդեցիկության եւ բարյացակամության ինդեքսներ






# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԻՆՖՈԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Դիտարկված լրատվամիջոցներում Ռուսաստանին առնչվող նյութերում տեղ գտած չեզոք, դրական եւ բացասական նկարագրություններն ունեն իրենց ծագումնաբանությունը: Դրանք՝

• Լրատվամիջոցների կողմից արված սեփական անմեկնաբանություններն ու գնահատականներնեն:

• Հայաստանյանտարբերուժերի, գործիչների, մասնագետների մեկնաբանություններն ուգնահատականներնեն, որոնքտեղենգտել ԶԼՄ-ների հրապարակումներում:

• Ռուսաստանյանուժերի, գործիչների, մասնագետների մեկնաբանություններն ու գնահատականները:

• Արտասահմանյանայլուժերի, գործիչների, մասնագետների մեկնաբանություններն ու գնահատականները:

Այս դասդասումը կատարել ենք հիմնականում հասկանալու համար, թե իրականում ի՞նչ մասնաբաժին ունեն հայաստանյան լրատվամիջոցները գնահատականների ու մեկնաբանությունների ողջ զանգվածում, որոնցով էլ ըստ էության ուրվագծվում է Ռուսաստանի ինֆոկերպարը հայաստանյան լսարանների համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված լրատվամիջոցներում որոշակի չափաբաժնով շրջանառվում են նաեւ հայաստանյան այլ ԶԼՄ-ների կոնտենտները արտատպությունների կամ համառոտ վերաշարադրանքների տեսքով, մենք հաշվարկել ենք այդ ցուցանիշները նաեւ միասնաբար, անվանելով դրանք «հայաստանյան ԶԼՄ-ներ»:

Եվ ուրեմն՝ այս առումով ստացել ենք հետեւյալ պատկերը.

• Չեզոք նկարագրությունների գլխավոր հեղինակները իրենք իսկ հայաստանյան ԶԼՄ-ներն են, նաեւ՝ հայաստանյան ուժերի ներկայացուցիչները, առանձին գործիչներն ու մասնագետները (միասաբար՝ 91%): Մեր դիտարկած լրատվամիջոցներում շոշափելիորեն ավելի քիչ է եղել արտասահմանյան այլ (3%), եւ ռուսաստանյան գործիչների, ուժերի, մասնագետների (6%) չեզոք նկարագրությունների քանակը:

- Դրական կերպարի ցուցանիշները գլխավորապես ձեւավորվել են հայաստանյան (57%)  եւ ռուսաստանյան ուժերի, գործիչների ու այլ մասնագետների արտահայտած կարծիքների (23%), եւ հետո միայն՝ բուն իսկ հայաստանյան մեդիայի (17%) կողմից արված մեկնաբանությունների հիման վրա:

- Բացասական կերպարի գլխավոր հեղինակները դարձյալ հայկական կողմն է՝հայաստանյան ԶԼՄ-ները եւ հայաստանյան ուժերը, գործիչները մասնագետները (միասաբար՝ 95%):

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակ 6**

**Գրաֆիկ. Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հեղինակներն ըստ նկարագրությունների աղբյուրների**









Որպես Ռուսաստանի կերպարի ձեւավորման համահեղինակներ հանդես են եկել նաեւ արտասահմանյան ԶԼՄ-ները, դրանցից արված արտատպությունների կամ դրանցում տեղ գտած բնութագրություններին հղումների տեսքով:

Եվ այս առումով պարզել ենք, որ բոլոր նշանների (չեզոք, դրական եւ բացասական) ցուցանիշների ձեւավորման հարցում ռուսաստանյան լրատվամիջոցներն ավելի մեծ մասնաբաժին ունեն, քան արտասահմանյան այլ երկրների լրատվամիջոցները:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը**

**Գրաֆիկ. Ռուսաստանի նկատմամբ տրամադրվածությունն ըստ արտասահմանյան ԶԼՄ-ներից փոխառնված նյութերի եւ նկարագրությունների**









## Այլ խոսքերով՝

- դիտարկված լրատվամիջոցների բոլոր (1098) բացասական նկարագրությունների մոտ է 1/3-ը (32%) կազմել են արտասահմանյան ԶԼՄ-ները:

Այդ թվում՝ 19%-ի հեղինակները ՌԴ աղբյուրներն են, մոտ 13% հեղինակները՝ այլ երկրների լրատվամիջոցները:

- դիտարկված լրատվամիջոցների բոլոր (365) դրական նկարագրությունների մոտ 29% -ը դարձյալ արտասահմանյան աղբյուրներն են:

Այդ թվում՝ 22% -ը Ռուսաստանյան աղբյուրներն են, 7%-ը՝ այլ երկրների լրատվամիջոցները:

Տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակ7, 8 եւ 9 :

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ռուսաստանի մասին հայաստանյան լրատվամիջոցներում նկարագրված սյուժեներն ունեն երեք հիմնական ուղղություններ:

- Հայաստանի հետ անմիջապես կապ չունեցող սյուժեներ, որոնք դասակարգել ենք ըստ թեմաների. այսպես կոչված ***ներռուսաստանյան թեմա*** (երկրի ներսում տեղի ունեցող անցուդարձերի, գործընթացների, գործող ուժերի ու նրանց հարաբերությունների մասին պատմություններ)եւ ***Ռուսաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների թեմա***(Ռուսաստանի ու, բացի Հայաստանից, այլ երկրների, միջազգային կազմակերպությունների հետ ունեցած հարաբերությունների մասին պատմություններ):

  **Այսերկու թեմաներըպայմանականորեն խմբավորենք մեկ ընդհանուր «Ռուսաստան» անվան տակ:**

- Հայաստանի հետ անմիջականորեն կապ ունեցող սյուժեներ, որտեղ նկարագրվում են Ռուսաստանի հայկական քաղաքականության տարբեր կողմերը:

  Ուսումնասիրված կոնտենտներից ի հայտ են եկել ռուս-հայկական 17 տարբեր (տնտեսական, ինտեգրացիոն, ռազմական/անվտանգության, Ղարաբաղյան կարգավորման, միգրացիոն, մշակութային, պատմական, սպորտային եւ այլ) ոլորտների հարաբերություններ:

  **Բոլոր այդ 17 ոլորտների մասին նյութերըխմբավորենք մեկ ընդհանուր «ՌԴ/ՀՀ հարաբերություններ» անվան տակ:**

- Հայաստանի, հայ հասարակության, առանձին ուժերի ու անհատների՝ Ռուսաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքն արտահայտող սյուժեներ, սոցհարցումների արդյունքներ եւ այլն:

  **Այս կարգի նյութերը խմբավորենք որպես հայաստանյան «Վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ»:**

Այս դասդասումները բացահայտեցին բավական հետաքրքիր մի պատկեր, որը ցույց է տալիս, որ հայաստանյան լրատվամիջոցների միասնական ցուցանիշներում Ռուսաստանի այսպես կոչված ոչ հայկական քաղաքականությունը ներկայացնող նյութերը («Ռուսաստան» խումբ՝ մոտ 50%) իրենց քանակով գերազանցում են ռուս-հայկական տարբեր ոլորտների մասին նյութերին (ՌԴ/ՀՀ հարաբերություններ, մոտ 43 %):

**Տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակ10:**

Զգալիորեն ավելի քիչ են եղել այն սյուժեները, որտեղ ընդհանուր ձեւակերպումներով, առանց կոնկրետ իրադարձային նկարագրությունների ներկայացվել է Ռուսաստանի նկատմամբ հայաստանյան այս կամ այն քաղաքական, հասարակական, քաղաքացիական խմբերի, անհատների վերաբերմունքը (Վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ՝ 7%):




Պարզ ասած՝ Ռուսաստանը հայաստանյան լրատվամիջոցներում ավելի շատ ներկայանում է որպես ինֆորմացիոն գործող սուբյեկտ (իրադարձություններ, գործող ուժեր եւ անձինք Ռուսաստանի ներսում, Ռուսաստանը որպես գործող սուբյեկտ իր արտաքին-քաղաքական տարբեր, այդ թվում նաեւ՝ հայկական հարթակներում, միասնաբար՝ 93%), քան որպես հայկական (գլխավորապես ընդհանուր ստերեոտիպային) վերաբերմունքի օբյեկտ: Ռուսաստանի ինֆոկերպարը ձեւավորվում է կոնկրետ մոտիվացիոն հիմքերով, երբ սկզբում ներկայացվում են իրադարձություններն ու գործընթացները, ապա տրվում գնահատականներ:

# ԹԵՄԱՏԻԿ ՌԵՅՏԻՆԳՆԵՐ ԵՒ ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ԳԾԵՐ

Նյութերի թեմատիկ դասակարգումն ընթացել է ըստ նյութի բովանդակայինլեյտմոտիվային գծի՝ «մեկ նյութ - մեկ թեմա» սկզբունքով:

**Լրատվամիջոցների ընդհանուր ցուցանիշներով** առաջին տողերում, որպես առավել ինտենսիվ արծարծված թեմաներ, հայտնվել են՝ Ներռուսաստանյան անցուդարձերի, ՌԴ/(բացի Հայաստանից) այլ երկրների եւ կազմակերպությունների հարաբերությունների, Հայաստանի ինտեգրացիոն վեկտորների, ՌԴ/ՀՀ տնտեսական հարաբերությունների, Ռուսաստանի նկատմամբ հայաստանյան վերաբերմունքի, ՌԴ/ՀՀ ռազմական ու անվտանգության հարցերի ոլորտների, ապա՝ ռուս-հայկական մնացած այլ ոլորտներում ծավալվող հարաբերությունների թեմաները:

**Տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակներ 11 եւ 12**

**Առանձին ԶԼՄ-ների թեմատիկ սանդղակներում առաջնահերթությունները տարբեր են:**

Այսպես՝ **Ներռուսաստանյան անցուդարձերի ներկայացման հարցում**, առանձնանում են News.am-ը (Ռուսաստանի հետ կապված բոլոր նյութերի 48%), Ilur.am-ը (25%), Yerkir.am-ը եւ Panorama.am-ը (յուրաքանչյուրը՝ 23%): Ներռուսաստանյան իրադարձություններին ամենից քիչ տեղ է տվել Aravot.am-ը (5%):

Այս նյութերի ճնշող մեծամասնությունը հիմնականում ռուսաստանյան լրատվամիջոցներից արտատպություններ են կամ դրանց արված հղումներով՝ իրադարձությունների համառոտ նկարագրություններ:

Սյուժետային գծերը բազմազան են. դրանցով հայաստանյան լսարանները հայերենով տեղեկանում են ռուսաստանյան ներքաղաքական, ներհասարակական, իրավական, միջանձնային ու այլ կարգի (քրեական քրոնիկոն, ավտովթարներ) իրադարձությունների մասին: Սկսած հայաստանյան հասարակության համար հանրային նշանակության տեղեկատվությունից (ռուբլու փոխարժեքի անկում, ֆինանսաբանկային մետամորֆոզներ, աշխատանքային միգրանտների կացության մասին օրենսդրական փոփոխություններ, ՌԴ պաշտոնական քաղաքականության հարցերով սոցհարցումների արդյունքներ ) մինչեւ մասնավոր, Ռուսաստանի տարբեր մարզերում տեղի ունեցած, ոչ համառուսաստանյան նշանակության իրադարձությունները:

**ՌԴ/այլ երկրների հետ հարաբերությունների թեմային զրեթե համաչափ տեղ են հատկացրել բոլոր լրատվամիջոցները. 20%-ից (Yerkir.am-ի դեպքում) մինչեւ 29%՝ (Panorama.am): Բացառություն են կազմել Aravot.am-ը (9%) եւ Lragir.am-ը (16%):**

Սյուժետային գծերով մեջտեղ են բերվել Ռուսաստանի արտաքին քաղաքական բոլոր հրատապ խնդիրները, ներառյալ՝ ռուս-ուկրաինական կոնֆլիկտը, Ռուսաստանի եւ Արեւմտյան երկրների սրացումները, էներգետիկ ոլորտում եղած խնդիրները եւ ուսումնասիրության ժամանակահատվածում տեղի ունեցած այլ իրադարձությունները:

Այս նյութերի ընդհանուր տարբերանշանն է՝ որ դրանցում բոլոր վերը նշված խնդիրները արծարծվել են գլխավորապես առանց հայկական խնդիրների հետ զուգահեռներ անցկացնելու, առանց Հայաստանի ԵՏՄ ինտեգրման հարցերի շոշափման: Նույնիսկ, եթե դրանք վերաբերում են ասենք Բելառուսի կամ Ղազախստանի ԵՏՄ անդամագրության հետ կապված իրադարձություններին ու անցուդարձերին: Կամ, եթե խոսքը Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների մասին է էներգետիկ տարանցումների, Ադրբեջանի ԵՏՄ հնարավոր անդամագրության եւ այլ հարցերում:

**Հիշեցնենք, որ մեր ուսումնասիրության ժամանակահատվածը համընկել էր Հայաստանի ԵՏՄ անդամակցության կարեւորագույն փուլերի հետ.** Հայաստանի կողմից ԵՏՄ պայմանագրի ստորագրումը Բելառուսի մայրաքաղաքում (հոկտեմբերի 10), ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Հայաստանի ԵՏՄ անդամակցության պայմանագրին հավանություն տալը (նոյեմբերի 14) եւ ԱԺ-ի կողմից փաստաթղթի սպասվելիք վավերացումը (դեկտեմբերի 4): Բոլոր այս իրադարձությունները առաջ բերեցին ակտիվ քննարկումներ հայաստանյան մեդիայում, եւ, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, նաեւ մեր դիտարկած լրատվամիջոցներում:

**ՌԴ/ՀՀ/ինտեգրացիոն վեկտոր թեմայի արդյունքներն ի հայտ են բերում այս թեմային մյուսներից ավելի շատ անգամ անդրադարձած լրատվամիջոցների խումբ, որը տարբերվում է վերը բերված առաջին երկու թեմաներին առաջնահերթություն տված լրատվամիջոցների խմբից:**

**Այսպես, առավելագույն ցուցանիշներ ունեն Aravot.am-ը (նյութերի 32%), 1in.am -ը (22%) եւ Lragir.am-ը (21%): Նվազագույն քանակի նյութեր այս թեմայով եղել են Panorama.am (4%) եւ News.am (2%) կայքերում:**

Սյուժետային գծերը պատկերում են Ռուսաստանի եւ նրա ներկայացուցիչների հնչեցրած գնահատականները, վերաբերմունքը Հայաստանի գլխավորապես Եվրասիական ինտեգրացիոն վեկտորի նկատմամբ, պատմում են Հայաստանի պաշտոնական շրջանակների՝ ԵՏՄ անդամագրության հետ կապված հանդիպումների մասին, ներկայացնում են ԵՏՄ պայմանագրի տարբեր դրույթների մասնավոր քննարկումներ, նաեւ՝ մի քանի աղմկահարույց հայտարարությունների առիթով (Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմաններով անդամագրության, Հայաստանի եւ ԼՂ միջեւ մաքսակետի (չ)տեղադրման եւ այլն) բավական ինտենսիվ արձագանքներ:

Սրանք քաղաքական ու այլ եզրահանգումներով նյութեր են «Ռուսաստանի, ԵՏՄ այլ անդամների, նրանց առանձին ներկայացուցիչների գործողություններն ու հայտարարությունները Հայաստանի ԵՏՄ հնարավոր անդամակցության մասին» ընդհանուր շրջանակներով:

Հայաստանի ինտեգրացիոն վեկտորների թեմայի նյութերում ԵՄ-ի հետ ինտեգրման հարցը վեր է հանվել որպես ԵՏՄ-ի անդամակցության նյութի մի առանձին, եւ արդեն անցած դրվագ:

Կան ռուս-հայկական հարաբերությունների մի շարք այլ ոլորտներ էլ (ՀՀ վերաբերմունք, ՌԴ/ՀՀ/տնտեսություն, ՌԴ/ՀՀ/անվտանգություն եւ ռազմական ոլորտ, ՌԴ/ՀՀ/Ղարաբաղյան կարգավորում), որոնց մասին նյութերում Ռուսաստանի կերպարը դիտարկվել է Հայաստանի ԵՏՄ ինտեգրման պրիզմայով, Ռուսաստանի հետ ապագա սյուժեները նույնականացվել են ԵՏՄ ինտեգրման հետ կապված մի շարք խնդիրների ու հարցերի հետ:

Հայաստանյան մեդիայում 2014 թ.հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Ռուսաստան ասելով նկատի են ունեցել ԵՏՄ, իսկ ԵՏՄ-ի տակ գլխավորապես հասկացվել է Ռուսաստան:

**ՌԴ/ՀՀ/անվտանգության եւ ռազմական ոլորտի** մասին մյուս լրատվամիջոցներից առավել անգամ գրվել է Lragir.am (12%), Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում Ռուսաստանի դերակատարության մասին (ՌԴ/ՀՀ/Ղարաբաղյան կարգավորում թեմա) նյութերի առավելագույն քանակ ունեցել են Lragir.am(5%), Yerkir am եւ 7or.am (յուրաքանչյուրում՝ Ռուսաստանի հետ կապված նյութերի 4%):

Սյուժետային գծեր - Անվտանգության/Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության եւ Ղարաբաղյան կարգավորման թեմաներով նյութերի սյուժետային գծերը պտտվում են Ռուսաստանի երկու ավանդական ընկալումների շուրջ. Ռուսաստանը որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր եւ Ռուսաստանը որպես Ղարաբաղյան կարգավորման գործընթացի սուբյեկտ:

Այդ երկու ընկալումների հարցում էլ հանդիպում ենք իրարամերժ պնդումների. մի կողմից ունենք պնդումներ, թե Հայաստանի ԵՏՄ անդամագրումը սպառնալիք է Հայաստանի եւ Ղարաբաղի համար, քանի որ այդպես Հայաստանը ինքնակամ գնում է մեկուսացման, ավտոմատ կերպով հայտնվում է պատժամիջոցների ալիքի տակ, այդպես Հայաստանը կորցնում է իր արեւմտյան գործընկերներին եւ այլն, իսկ մյուս կողմից՝ ունենք այն հավաստիացումները, որ ԵՏՄ անդամագրումը Հայաստանի համար նշանակում է անվտանգության ապահովում, քանի որ այդպես միայն կարելի է զերծ մնալ Ռուսաստանի հարվածից, որն «աշխատում է զենքով և պատերազմելով»:

Մի կողմից՝ կա Ռուսաստանի կերպար, որը Հայաստանի անվտանգության երաշխավորն է, իսկ մյուս կողմից կա Ռուսաստան, որը նաեւ Հայաստանի, ուստի նաեւ՝ Ղարաբաղի ուղղակի «սպառնալիքի մատակարարն է», քանի որ մեծաքանակ զենք է վաճառում Ադրբեջանին:

Հայաստանում ռուսական ռազմակայանի մասին նյութեր հայտնվել են միայն լուրերի տեսքով, որտեղից տեղեկանում ենք ռուսաստանյան ռազմական գործիչների ռազմաբազա այցելությունների եւ այլ ծրագրային իրադարձությունների մասին: Այսինքն՝ ինֆորմացիոն առիթների առկայության ժամանակ:

Ընդգծենք, որ Ռուսաստանի հետ ռազմավարական, անվտանգության եւ ռազմական համագործակցությունը դիտարկվում է ռուս-ադրբեջանական ռազմական համագործակցության եւ արեւմտյան երկրների հետ Հայաստանի հարաբերությունների հեռանկարի տեսանկյունից:

Եվ ընդհանուր, եւ առանձին լրատվամիջոցների արդյունքներով, շոշափելիորեն ավելի պակաս անգամ են արծարծվել Հայաստանի համար այնպիսի ավանդական խնդիրները, ինչպես միգրացիան եւ Ռուսաստանի հայկական սփյուռքն է:

# ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՒ ԱՎՏՈՍՏԵՐԵՈՏԻՊԵՐ

Ըստէությանբոլորայննյութերը, որտեղներկայացվում են Հայաստանի տարբեր ուժերի, առանձին գործիչների ու մասնագետներիվերաբերմունքը Ռուսաստանի որպես պետության, ռուսաստանյան հասարակության նկատմամբ (Վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ թեմա) ի մի են բերում հայ-ռուսական քաղաքականության տարբեր ոլորտներում եղած դրսեւորումները հետեւյալ երկու տեսանկյուններից.

- Հայաստանը եւ հայ հասարակությունը Ռուսաստանի հետ հարաբերությունների արդյունքում,
- Հայաստանը եւ հայ հասարակությունը Ռուսաստանի հետ հարաբերությունների մասին:

Այս խմբի նյութերն իրենց քանակով լրատվամիջոցների ընդհանուրցուցանիշներում առաջ են անցել (մոտ 7%) այնպիսի թեմաներով նյութերից, ինչպես անվտանգությունն ու ռազմական համագործակցությունը, Ղարաբաղյան կարգավորումը, միգրացիան, սպորտը, իրավապահ, մշակութային, եկեղեցական, հասարակական, գիտակրթական, տեղեկատվական կապերը, հայ-ռուսական պատմական անցուդարձերը :

Հայ-ռուսական քաղաքականության եւ վերաբերմունքի թեման առավել ինտենսիվ ներկայացրած լրատվամիջոցներն են՝ Aravot.am-ը (20%), Lragir.am-ը (11%), 1in.am-ըեւ 7or.am-ը (յուրաքանչյուրը՝ 10%): Բոլորից քիչ անգամ հայկական վերաբերմունքի հարցերին անդրադարձել է News.am-ը (1%):

**Նշենք, որ այս խմբում ժողովված են նյութեր, որոնք ամբողջությամբ են նվիրված եղել Ռուսաստանի նկատմամբ հայաստանյան վերաբերմունքին: Եվ հենց այս խմբի նյութերում է, որ լրատվամիջոցների ընդհանուր ցուցանիշներով բացասական նկարագրությունների քանակը (53.5%) գերազանցել է թե չեզոք (29.5%), թե դրական (17%) նկարագրությունների քանակին:**

**Տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ, Աղյուսակ13:**

Բայց մնացած բոլոր թեմաներով էլ նյութերում հանդիպել են դրվագներ, որտեղ Ռուսաստանի նկարագրությունները զուգորդվել են այսպես կոչված հայաստանյան **ինքնանկարագրություններով (ավտոստերեոտիպերով)**: Սա Ռուսաստանն է, իսկ սա մենք ենք (մեր իշխանությունները, օլիգարխները, ընդդիմությունը, հասարակությունը, բանակը, սովորույթները, մտածելակերպը եւ այլն) սկզբունքով:

Ահա մի քանի տիպային օրինակներ.

- «Մինչայդ, միակտեղը, որտեղդեռհավատումենՌուսաստանիհամենազորությանը, Հայաստաննէ»(http://www.lragir.am/index/arm/0/politics/view/104928),
- «Հայաստանիցորեւէբանկախվածչէր, որովհետեւՀայաստանըամենջանքգործադրումէր, որպեսզիդուրգաիրմեծեղբորըեւդառնաայդմիությանանդամ»(http://www.aravot.am/2014/10/10/505394/):
- «Որոշ քաղաքական գործիչներ փորձում են պրոռուսական հայտարարություններ անել և ցույց տալ Հայաստանի ուղին դեպի Ռուսաստան, որպես միակ հնարավոր ուղի» (http://www.1in.am/1448487.html):
- «Հայաստանը միացել է Ռուսաստանի, Բելառուսի ու Ղազախստանի միությանը, եւ առաջին բանը, որը փոխառվելու է ավագ եղբայրներից, անձի պաշտամունքն ու հավերժ իշխելու հայտն է լինելու: Նա, ով Հայաստանը ներկցի Եվրասիական միությանը, «խանության յառլիկ» կստանա»: (**http://www.panorama.am/am/politics/2014/11/13/hayrikyan/**)
- «Եթե հայկական հողում կարող է ծնվել Զորի Բալայանի նամակ, որը Արցախը կհայտարարի Ռուսաստանի խնդիր եւ կհռչակի Ռուսաստանի իրավունքը Արցախի հանդեպ, ապա Ռիժկովը հաստատ իրեն իրավունք կվերապահի հայտարարել, որ Արցախը պատմական հայկական տարածք չէ» (**http://www.lragir.am/index/arm/0/country/wv5k/105996**)
- «Այս ամենի արդյունքում Հայաստանի քաղաքացիները հեռանում են Հայաստանից, ձեռք են բերում Ռուսաստանի քաղաքացիություն, իսկ Սերժ Սարգսյանը հայտարարում է, որ արտագաղթի մասին պետք չէ խոսել չափազանցնելով իրավիճակը» (**http://www.1in.am/1456533.html**):
- «Նա (Անդրանիկ Միհրանյանը- Լ.Բ.) բարդույթավորված և թերարժեք անվանեց Կիսելյովի հայտարարություններից վիրավորվածներին: Նաև ասաց, որ զարմացած է, թե ինչ վայրենի և աննորմալ, հակակիսելյովյան արշավ է ծավալվել հայկական մամուլում նրա հայտարարություններից հետո» (**http://www.1in.am/1467515.html):**
- «Ահա նրանք են Մոսկվայի քաղաքականության պրովայդերները, եւ Մոսկվայի համար հատկապես գերադասելի է, որ նրանք կրեն տվյալ ժողովուրդների ազգանունները, օրինակ հայկական, որպեսզի ավելի համոզիչ լինի զաղութացումը եւ լինի կամավորության սկզբունքով…
  Այդ կատեգորիայի մարդկանց մեջ գերակշռում են հայկական ազգանուններ կրողները: Որոնց պահվածքը նույնիսկ Ռուսաստանում ու Հայաստանում համապատասխան շրջանակների սառսուռն է առաջացրել»
  (**http://www.lragir.am/index/arm/0/politics/view/105966):**

**Ընդգծենք, որ Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի թեման միակն է, որտեղ բացասական նկարագրությունների թիվը գերազանցում է եւ չեզոք, եւ դրական նկարագրությունների թվին , եւ Ռուսաստանի մասին նյութերի 60%-ը զուգորդվում է Ռուսաստանի կերպարի ֆոնին հայաստանյան ինքնանկարագրությունների (ավտոստերեոտիպերի) օրինակներով: Սա դիտարկված 8 ԶԼՄ-ների միասնական ցուցանիշներով:**

